



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

27 հունիսի 2013 թվականի N 275 - Ա

ք. Հրազդան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի N 1180-Ն որոշման հավելվածի 20-րդ կետի 3-րդ, 4-րդ ենթակետերի, 21-րդ և 22-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2013 թվականի հունիսի 7-ի «Տարահանման մարմինների փաստաթղթերի օրինակելի ձևերին հավանություն տալու և գործածության մեջ դնելու մասին» N 501-Ա հրամանի՝ արտակարգ իրավիճակների և ռազմական դրության ժամանակ նախապես բնակչության, նյութական ու մշակութային արժեքների տարահանման պլանավորման, նախապատրաստման և անցկացման ապահովման նպատակով՝ **որոշում եմ.**

1. Ստեղծել՝

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի բնակչության տարահանման հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով)՝ համաձայն N 1 հավելվածի,

2) հանձնաժողովի կազմում՝ աշխատանքային խմբեր՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Հաստատել հանձնաժողովի կանոնադրությունը՝ համաձայն N 3 հավելվածի:

3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի համայնքների ղեկավարներին՝ երկամսյա ժամկետում իրենց վարչական տարածքներում ստեղծել՝

1) տարահանման հանձնաժողովներ,

2) տարահանման (ընդունման) հավաքակալայաններ,

3) ժամանակավոր տեղակալման կետեր,

4) երկարատև բնակչության կետեր,

5) հաստատել հանձնաժողովների կանոնադրությունները,

6) աջակցել համայնքի տարածքում գործող կազմակերպությունների ղեկավարներին՝ երկամսյա ժամկետում ստեղծել օբյեկտային տարահանման հանձնաժողովներ,

7) մշակել տարահանման (ընդունման) հավաքակալայանների կառուցվածքային մարմինների պարտականությունները և եռամսյա ժամկետում ներկայացնել համայնքի տարահանման հանձնաժողովի հաստատմանը,

8) հանձնաժողովները և հավաքակալայանները ստեղծել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության հետ համաձայնեցնելով:

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2011 թվականի մարտի 11-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի տարահանման-տեղաբաշխման հանձնաժողով ստեղծելու մասին» N 93-Ա որոշումը:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ Ա. Ղազարյանի վրա:



ԳԱԼ ԴՅԱՆ



ԿԱԶՄ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

1. **Ղազարյան Ալբերտ** հանձնաժողովի նախագահ,
Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզպետի տեղակալ,
2. **Հակոբյան Սամվել** հանձնաժողովի նախագահի տեղակալ,
Հայաստանի Հանրապետության Կոտայքի
մարզպետարանի աշխատակազմի տեղական
ինքնակառավարման և հանրապետական գործադիր
մարմինների հարցերով վարչության պետ,
3. **Բուրոյան Ջուլետտա** հանձնաժողովի քարտուղար, Հայաստանի
Հանրապետության Կոտայքի մարզպետարանի
աշխատակազմի քարտուղարության պետ:
4. **Հանձնաժողովի անդամներ՝**
- 1) **Ղազարյան Վարուժան** <<ԱՐՄԵՆՏԵԼ>> փակ բաժնետիրական ընկերության
Արևելյան տարածքային կենտրոնի Հրազդան -
Չարենցավան ցանցի շահագործման ուղղության
փորձագետ,
- 2) **Հակոբյան Երվանդ** Հայաստանի Հանրապետության Կոտայքի
մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության
վարչության ճարտարապետաշինարարական
բաժնի գլխավոր մասնագետ,
- 3) **Այվազյան Գրիգոր** Հայաստանի Հանրապետության Կոտայքի
մարզպետարանի աշխատակազմի
առողջապահության և սոցիալական
ապահովության վարչության առողջապահության
բաժնի գլխավոր մասնագետ,
- 4) **Եղիշյան Ալեքսան** Հայաստանի Հանրապետության Կոտայքի
մարզպետարանի աշխատակազմի
քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ,
- 5) **Բաղդասարյան Սեդա** Հայաստանի Հանրապետության Կոտայքի
մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական
և սոցիալ-տնտեսական զարգացման
վարչության ֆինանսատնտեսագիտական
բաժնի պետ,